Այն խոստման համեմատ, որ փրկիչը արել էր մեր Աբգար թագաւորին, նրա համբառնալուց յետոյ, Բարդուղիմէոս եւ Թադէոս առաքեալներին վիճակոեցաւ գալ Հայաստանը լուսաւորելու: Բարդուղիմէոս առաքեալը եկաւ Աղբակայ կողմերը, իսկ Թադէոս առաքեալը՝ Հայոց-ձորը, բերելով իր հետ աստուածամուխ գեղարդը, Ս. Աստուածածնի քօղը եւ անուշահոտ իւղի շիշը, որով փրկչի գլուխը օծեցին: Նա սկսեց քարոզել եւ իր բերած սրբութիւններով հրաշքներ գործել: Անգղ գետի ափի մօտ, ճիշտ այնտեղում, ուր այժմ Սուրբ Աստուածածնի վանքն է կանգնած, կար մի մեհեան: (Այստեղից փոքրինչ հեռու իջեւանել էր մեր քարաւանը:) Աստուածամայրը երազում երեւում է Փրկչի առաքեալին եւ ասում է, որ այդ մեհեանի տեղում իր համար մի տաճար կանգնեցնէ: Առաքեալը մի հրաշքով կործանում է մեհեանն ու կուռքերը եւ սկսում է տաճարը կառուցանել: Այդ ժամանակ սկսւում է մի խուլ, աներեւոյթ կռիւ առաքեալի եւ կուռքերի մէջ: Ինչ որ առաքեալը ցերեկով շինել էր տալիս, դեւերը գիշերով քանդում էին եւ քարերը ձգում էին Անգղ գետի մէջ: Այդ քարերի կուտակութիւնից կազմոեցաւ այս բարձրութիւնը, որի վրայից գետը ջրվէժի նման ցած է թափւում եւ կոչւում է Սաչան: Յետոյ առաքեալը, Աստուածամօր խորհրդով, իր հետ բերած հրաշագործ իւղով օծում է մի խաչքար եւ կանգնեցնում է շինելիք տաճարի տեղում: Այնուհետեւ դեւերը այլեւս չէին համարձակւում մօտենալ շինուածքին, բացի դրանից, նրանք սեւ ագռաւների կերպարանք էին ստանում եւ աչքի էին երեւում: Բայց որովհետեւ նրանք օդի մէջ աղմուկ էին բարձրացնում եւ վերեւից անհանգստացնում էին բանորներին, այդ պատճառով անգղների կերպարանքով յայտնւում են աստծոյ հրեշտակները եւ սկսում են պատերազմել ագռաւների հետ: Անգղները յաղթում են, բոլոր ագռաւներին կոտորում են եւ նրանց դիակները նետում են գետի մէջ, միեւնոյն տեղում, ուր նրանք ձգել էին տաճարի քարերը: Ի յիշատակ այդ յաղթութեան, գետը կոչոեցաւ Անգղայ գետ, իսկ գիւղը, որտեղ կառուցոեցաւ Ս. Աստուածամօր տաճարը, կոչոեցաւ Անգղ գիւղ: Առաքեալի հրաշագործ իւղով օծած խաչքարը մինչեւ այսօր էլ մնում է տաճարի մէջ, եւ նոյն քարից անընդհատ կերպով ծորում է հրաշագործ ձէթ, որը ուխտաւորները ստանում են իրանց հետ եւ գործ են դնում զանազան ախտերի բժշկութեան համար: Պատմում էին, թէ առաջ այդ ձէթը այնքան շատ եւ առատութեամբ էր բխում, որ բաւականացնում էր վանքի բոլոր կանթեղների լուսաւորութիւնը: Բայց մի վարդապետի ագահութեան պատճառով ձէթը նոազեցաւ, երբ նա սկսեց վաճառել:

Մենք երկար չէինք բաժանւում Անգղ գետից, գնում էինք նրա հակառակ ուղղութեամբ: Ձկնորսները, նրա ընթացքի ուղղութեամբ, շտապում էին